ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի մարտ ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2019 թվականի 1-ին եռամսյակում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 11714.7 մլն դրամ՝ պլանավորված 10800.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 8.5 տոկոսով կամ 914.7 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 3.7 տոկոսով կամ 423.4 մլն դրամով:

Մարտ ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4876.0 մլն դրամ՝ պլանավորված 4300.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 13.4 տոկոսով կամ 576.0 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 184 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 8 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 38 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 17.1 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 12 ստուգում՝ 15.4 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների» հայեցակարգի շրջանակներում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման 9, վարձու աշխատողների չձևակերպման 7, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 2, պակասորդի հայտնաբերման, ձեռնարկատիրական գործունեության առարկաների չգրանցման ու ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 1-ական դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 98 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 58-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 10-ը՝ պիտանիության ժամկետը լրացած ապրանքների դուրսգրման գործընթացի, 8-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 6-ը՝ ապրանքների

շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 5-ը՝ ելակետային տվյալների ու դրանց ուղղիչ գործակիցների ճշտության և 11 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ թվով 2 հայցադիմում՝ 25.0 հազ. դրամ գումարով, պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ 1 հայցադիմում՝ 2.7 մլն դրամ գումարով: Նույն ժամանակահատվածում ավարտվել են բռնագանձման հայցերով 11 գործ՝ 38.8 մլն դրամ գումարով և վճարման կարգադրության հայցերով 8 գործ՝ 120.0 հազ. դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 137 վարչական գործով սահմանվել է 2.0 մլն դրամ վարչական տուգանք:

Նախաքննության ընթացքում է գտնվում ԼՂՀ Քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու փաստի առթիվ հարուցված 1 քրեական գործ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 7457 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 6723:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 88 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում մարտ ամսում կատարվել է վերադարձ 9 վարձու աշխատողի՝ 1.7 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հաշվետու ամսում գործունեությունը նոր սկսող 44 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

«Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ մարտ ամսում հարկ վճարողների հետ կնքվել են թվով 1301 պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցեր:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության հաստատմանն են ներկայացվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 26-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի N 138 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի N 306-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի N 307-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը:

Հարկային օրենսգրքի նախագծի մշակման և հանրային քննարկումների կազմակերպման աշխատանքները համակարգված իրականացնելու նպատակով ԱՀ ֆինանսների նախարարի հրամանով ձևավորվել է աշխատանքային խումբ, հաստատվել խմբի աշխատակարգը:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը և տրվել առաջարկություններ:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ամսում ԱՀ ֆինանսների նախարարության մասնագետները գործուղվել են ՀՀ պետական եկամուտների կոմիտե, քննարկել Հայաստանի և Արցախի տնտեսավարող սուբյեկտների միջև կատարվող գործարքների մասով դուրս գրվող հարկային հաշիվների միասնական հարթակի ներդրման ծրագրային ապահովումներին առնչվող հարցեր: Նախարարության երկու աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Հաշվետու ամսում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2019 թվականի 1-ին եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 1012 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվետու ամսում հարկային մարմին է մուտքագրվել 230, ելքագրվել՝ 92 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 3 գրություն:

ՀՎՄՀՎԻԲ պետ **Ա. Մուսայելյան**